



ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 24 ՄԱՐՏ, 1929

ԹԻՒ 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԿՐՕՆՔԻՆ ՀԻՄՆ (5)

Գիտութիւն եւ Կրօնք

Գիտական խուզարկումներու յառաջացումով՝ շատ մը մարդիկ իրենց ուշադրութիւնը գիտութեան վրայ դարձուցին կրօնքի համար հաստատ հիմ մը գտնելու նպատակով: Անոնք խորհեցան թէ հոս բոլոր տարակոյտները եւ անորոշութիւնները վերջ պիտի գտնեն. թէ գիտութիւնը մեզի պիտի ցուցնէ իրականութիւնը որուն վրայ պիտի կըրնանք շինել կրօնքը: Այսպէս, նոր կորովով պրպտումի նուիրուեցան: Բայց կրօնքի համար հիմ մը գտնելու նպատակով ինչպիսի՞ արդիւնքներ կրնանք ակնկալել ասկէ:

Տարբեր գիտութիւններ կան, որոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէ իր օժանդակութեան բաժինը բերել կրօնքի հիմը շինելու մէջ:

1. Մէկը կ'ըսէ թէ այն բառերը որոնցմով կրօնական գաղափարներ կ'արտայայտենք՝ հասարակաց ծագում մ'ունենին այն շատ հեռաւոր անցեալին մէջ երբ առնչակից բառեր զործածողներէ այ ցեղերը մէկ էին: Այսպէս, լեզուներու ուսումնասիրութեամբ, եթէ այս բառերուն սկզբնական բուն իմաստները

կարենանք որոշել, իր սկզբնական շարժանին մէջ կրօնքին հիմը կազմող բուն իսկ գաղափարները գտած պիտի ըլլանք:

2. Ուրիշ մը կ'ըսէ թէ մենք գիրք մ'ունինք որ մեր կրօնքին իբր սրբական մէկ չափանիշը կը գործածուի: Եթէ մենք կրնանք ուսումնասիրել եւ որոշել Ս. Գրքի մասին եղող ճիշդ պատմական գեղքերը, անոր աղբիւրները, անոր խմբագրութիւնը, անոր պատմականօրէն արժանահաւատ ըլլալը, անոր ատեն մեր կրօնքին իրական պատմական հիմը գտած պիտի ըլլանք: Նմանապէս, Աւետարանները Յիսուսի կեանքը կը պատմեն: Եթէ, Աւետարանները գիտականօրէն պատմական ուսումնասիրութեան առարկայ ընելով՝ կարենանք գտնել Յիսուսի իսկական խօսքերն ու գործերը, կարենանք անոր կեանքը իրապէս վերարտադրել, քրիստոնէութեան հիմին հասած պիտի ըլլանք:

3. Մի երրորդը կ'ըսէ թէ Աբարիչին մասին գիտելիք փնտռելու բուն տեղը, երկրէս վեր աստղերու մէջ կը գտնուի: Ապտղագիտական գիւտերու միջոցաւ է որ Աստուծոյ մասին մեր գաղափարները պիտի շտկուին եւ մենք պիտի գտնենք ճշմարտութիւնը՝ վրան կրօնքը հիմնելու համար:

4. Կենսաբանական, երկրաբանա-

կան, տարրաբանական ուսումնասիրութիւններու միջոցաւ մեր գիտելիքները մեծապէս աւելցած և տիեզերքի մասին մեր գաղափարները փոխուած են: Ահա, քանի մեր ծանօթութիւնները կատարեալ կ'ըլլան՝ կրօնքի համար աւելի՛ հաստատ հիմք պիտի կրնանք գտնել:

5. Գիտութիւններու այս ցանկը չ'երկարենք: Կրօններու պատմութիւնը ուսումնասիրողները ըսած են՝ թէ քանի որ կրօնքը ընդհանուր իրողութիւն մըն է, բոլոր կրօններու, մասնաւորապէս նախնական կրօններու հասարակաց՝ եղող նմանութիւններու՝ մէջ պիտի գտնենք կրօնքի հիմք: Հոգեբանները ըսած են թէ ճշմարիտ հիմք կրօնքի հոգեբանութեան մէջ կը գտնուի: Ուրիշ կարգ մը գիտուններ սա իրողութեան կարեւորութիւն տուած են՝ թէ կրօնական արարքները և արարողութիւնները ընկերային բնոյթ ունին: Եթէ այս արարքներու ընկերային պատճառները եւ անոնց ընկերային արժէքները կարենանք գտնել, կրօնքի համար իրական հիմք գտած պիտի ըլլանք:

6. Տակաւին կարգ մը մարդիկ ալ կ'ըսեն թէ նոր գիտելիքներու կը կարօտինք, բայց զանոնք չենք կրնար գիտութեան միջոցաւ ձեռք ձգել: Մինք նոր յայտնութեան մը կը կարօտինք մեր շփութեանը անհետացնելու և ճշմարտութիւնը ցուցնելու համար:

Եթէ այս գաղափարներէն ոեւէ մէկը տարօրինակ թուի, թող չկարծուի թէ անոնցմէ ոեւէ մէկը երեւելայական է: Անոնք իրական մտածումներ են՝ որոնք գիտական կրթութիւն ստացած հազարաւոր մարդերու և կիներու միտքերուն վրայ ազդեցութիւն ունին այսօր, և որոնք զանոնք կ'առաջնորդեն տարակուսելու, իրենց կրօնական գաղափարները փոխելու կամ նոյնիսկ կրօնքը մերժելու: Անոնք կ'ըսեն թէ ապագայ կրօնքը գիտութեան կրօնքը պէտք է ըլլայ, և թէ

այն եզրակացութիւնները, որոնց գիտութիւնը յանգած է, պէտք է միշտ առաջնորդ ըլլան, որ որ ալ մեզ տանին անոնք:

Անկասկած տիեզերքի մասին մեր ծանօթութիւնները շատ սահմանափակ են, եւ զիտական խուզարկումի իւրաքանչիւր գիւտը մեր առջեւ նոր հորիզոններ կը բանայ: Բայց կրօնքին հիմք այս նոր գիւտերու մէջ պէտք է զբոսնենք: Նախկին քրիստոնեաները գիտութեան մասին շատ քիչ գիտէին, եւ ներկայիս շատ մը անկեղծ քրիստոնեաներ անուա մարդիկ են: Ո՞րք է անոնց համար կրօնքի հիմք: Աստուծոյ, մարդու և աշխարհի մասին մեր կրօնական գաղափարները բարեփոխելու համար պատճառներ կրնանք գտնել գիտութեան մէջ: Կրօնական գաղափարները իրապէս արդի գիտական գիւտերէն խորունկ կերպով ազդուած են: Բայց կրօնական կեանքի մեղմացումը կրօնական հաւատալիքներէն տարրեր բան մ'է: Գաղափարը փոփոխական է, իսկ կրօնական կեանքը ունենալը տեւական է և աւելի՛ հաստատուն: Գիտութիւնը՝ մտածելու համար կարեւոր նիւթեր կրնայ հայթայթել, ան նոյնիսկ մեզ կրնայ առաջնորդել խորհելու թէ ի՞նչ է կրօնական կեանքի հիմք, բայց գիտութիւնը ի՞նքը չի կրնար այդ հիմք ըլլալ: Կրօնքը՝ Աստուծոյ և մարդուն միջև հաղորդակցութիւն մ'է: Կրօնքը՝ Աստուածային կեանքն է մարդուն հոգիին մէջ: Եւ այսպիսի կեանքի մը համար, այսպիսի յարաբերութեան մը համար հիմք կենդանի, ներդրածիչ և հզօր բան մը պէտք է ըլլայ, ոչ թէ տեսակ մը ծանօթութիւն, որչափ ալ կատարեալ ըլլայ ան: Գիտութիւնը պարզապէս զատուարեալ ծանօթութիւն է: Կրօնական կեանքի մը համար Աստուածային Բարեկամ մը անհրաժեշտ է:

Ճ. Է. ՄԷՐԻԼ

ԴԷՊ Ի ՅԱՂԹԱՆԱԿ

Յիսուս իր երկրային կեանքին մէջ տաղնապալից վճռական պահեր ապրեցաւ, Անոր մկրտութիւնն ու քառասնօրեայ փորձութիւնը, լքումը ամբողջին կողմանէ, աշխակերպութիւնը, Գեթսեմանին եւ խաչելութիւնը եւ ապա Յարութիւնը Աւետարաններու մէջ մեզի ծանօթ վճռական վայրկեաններն են: Յիսուս իր առաքելութեան բոլոր տեւողութեան մէջ քաղցի խաչի մը ստուերին մէջէն, որ կ'երկարէր Գողգոթայէն մինչեւ Յորդանան: Աւագ Ծաբաթը Ան անցուց այնքա՛ն մօտ, ստորոտն իսկ այդ խաչին, որուն գիտակցութեամբը լիցուն՝ խաչէն առաջ վերջին բայց է՛ն տաղնապալից հոգեւոր փորձառութիւն մ'ունեցաւ: Գեթսեմանի... կանգ առէք անոր դրան առջեւ մտնելէ առաջ, չ'անսրբացնելու համար զայն մեր անպատկառ եւ անհամակիր ներկայութեամբը, Տէրը հոն է, կատարելապէս առանձին՝ ընդունելութեամբ մարդկութեան բոլոր վիշտերուն դառն բաժակը. նոյնիսկ իր մտերիմ աշակերտները չկրցան իր քովը, իրեն հետ, իրեն պէս զգալ ու ապրիլ դերագոյն վայրկեանը: Ոհ, մարդկային անողորմ ակարութիւն! Աշակերտները ետեւը մնացին: Յիսուս իր բոլոր վճռական վայրկեանները առանձին ապրեցաւ. առանձին էր Ան փորձութեան պահուն, երեքները խոր թմբիրի մէջ էին երբ Ան աշխակերպեցաւ, Գեթսեմանիի մէջ քարնկէցի մը չափ աշակերտները հեռու մնացին իրմէ, խաչին վրայէն Ան հագիւկրցաւ տեսնել միայն գինքը սիրող աշակերտը իր մօրը քով: Եւ տակաւին մինք այսօր չենք հասկնար Տէրը Գեթսեմանիին մէջ, չենք կրնար չափել Անոր վիշտին խորութիւնը, կշռել Անոր չարչարանքին տարողութիւնը, զգալ ու ապրիլ Անոր թախիծը: Տակաւին Ան առանձին է հոն... իր տիեզերապարփակ

վիշտին մէջ: Մենք մարդկային արարածներս, Յիսուսի է՛ն մօտ եղած ատենն իսկ իսկ տակաւին քարնկէցի մը չափ հեռու կը գտնուինք Անկէ: Դառն իրականութիւն... — Բայց այս շիտակ չէ՞ նաեւ բոլոր մեծ մարդերու համար, որոնք սահմանուած են կարծեաւ առանձին ապրիլ իրենց Գեթսեմանիները, հոսարակ մահկանացուներու հոգեկան անկարողութեանը պատճառաւ:

Եւ սակայն Յիսուս յաղթեց: Իրական յաղթանակներու, մեծ յաղթութիւններու ճամբան կ'անցնի Գեթսեմանիէն եւ Գողգոթայէն, որուն սարին վրայէն տառապակոծ Փրկիչը ձայնեց. «Ամէն բան կատարուեցաւ»: Մեզմէ շատ շատերը անկատար կեանքի գիտակցութեամբ կը բաժնուին աշխարհէս, մի քանի տարիներու ես բաղձանքը մեր սիրտերուն մէջ լրացնելու մեր գործը: Անհասկնալի կը թուին մեզի Յիսուսի այս խօսքերը, երբ նկատի առնենք իր սպաննումը աւաղակի մը պէս, իր հետեորդներուն ցրուումը, իր աշակերտներուն փախչիլը եւ կորովաւքութիւնը: Վհատեցուցիչ պարագաներու տակ Ան քաջութիւնը ունեցաւ ըսելու թէ «կատարուեցաւ», — թէ Ան կատարեց ինչ որ իր բաժինն էր Հօրմէն իրեն յանձնուած: Մեր բաժինը միայն հաւատարմութեամբ եւ լրիւ կատարել այս աշխարհի մէջ, աննկատ թողլով անոր հետեանքները, ապա գործը յանձնել անոր՝ Տէրոջ ձեռքը, հոգեկան մեծ կորով կը պահանջէ իսկապէս: Յիսուս իր անխախտ հաւատքը, իր յստակատեսութիւնը պահեց միշտ խաչին ստուերին մէջէն եւ անկէ անդին զիտելու լուսաշողջող յարութեան եւ յաղթանակի փառքը: Երբ այս վսեմ յաղթանակը կը տօնենք, արդեօք պատրաստ ենք մասնակցելու անոր, տօնելու նաեւ մեր հոգիներուն մէջ Տէրոջ յաղթանակը մեղքին վրայ:

«ՍԻՈՆ» ԵՒ ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

«Սիոն» իր վերջին թիւին մէջ կը հը-
րատարակէ շահեկան յօդուած մը, որուն
մէջ Բաբէկէն Եպս. կը պարզէ Առաք. Ե-
կեղեցւոյ բարեկարգելի կէտերը, ըսելէ
վերջ թէ՛ «Ամէնքս ալ կը փափաքինք որ
բարեկարգուի Հայց. Եկեղեցին, ոչ ոք
կ'ուզէ վերքեր բանալ անոր զգայուն կո-
ղերուն վրայ, բարեկարգութեան սիրոյն:
Եւ չատուրախանալի պարագայ մըն է որ
Լուսինը մը չունինք մեր մէջ, ոչ ալ անոր
չարժասիրտները կան փափաքելի բարե-
կարգութիւնը իրագործելու համար:»

Գիւր. յօդուածագիրը չ'ուզիր վարդա-
պետական կամ դաւանաբանական խն-
դիրները արծարծել եւ կ'ըսէ. «Ուրիմն
մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ
դաւանանքը կը մնայ անխախտ: Միայն
խորհուրդներու եւ սուրբերու բարեխո-
սութեան մասին իբր պաշտպանողական
ստպէս» կը գրէ. «Անոնք որ կ'ուզեն
կրօնքը պարզել իր խորհուրդներէն, ի
հարկէ պիտի չյաջողին: ... վերջուր
կրօնքի մէջէն զաղանիքը, խորհուրդը,
կը գաղթի այլեւս կրօնք ըլլալէ:» Քիչ
վերջը կը շարունակէ ըսելէ վերջ թէ բա-
րեխոսութիւնը հիմնուած է հոգւոյ ան-
մահութեան վարդապետութեան վրայ.
«Մարտիրոսաց Կանոնը... կ'ողկոյնէ ան-
մահ հոգիները անոնց (սուրբերուն). կը
հաւատայ թէ անմահներ իրենց յարա-
բերութիւնը չեն կտրած այս աշխարհի
մահկանացուներուն հետ, եւ կը վստահի
անոնց թաքնախոսքեան:»

Սրբազան յօդուածագիրը կը յայտնէ
թէ «Եկեղեցւոյ անդամները անձնական,
ազատ կարծիք չունին հաւատամքներու
մէջ,» որոնք «Եկեղեցւոյ կողմէն պաշտո-
նապէս բանաձևուած վարդապետական
խնդիրներն են» եւ «պիտի ընդո-նուի ա-
ռանց քննութեան եւ առանց բանաձևի:»
Եւ զայն չնդունողները պէտք է Եկեղե-
ցիէն դուրս ելլեն:

Բարեկարգութիւնը գործնական հարց
մըն է, (ե ոչ վարդապետական ինչպէս
որ յիշուեցաւ), որուն համար կը կար-
գանք. «Ուրիմն բարեկարգութեան մէջ
նկատի առնուելիք գործնական խնդիր-
ներէն մէկն է Հայց. Եկեղեցւոյ պաշտո-
նունքը հասկնալի ընել ժողովուրդին եւ
չձանձրացնել զայն: «Եւ ասոր միջոցն
է...»

1. Պաշտամունքի լիզուն փոխանակ
զրաբարի աշխարհարար ընել, բացառու-
թիւն կը կազմեն միայն շարականները:

2. Պաշտամունքի տեւողութիւնը
կարճեցնել:

3. Պաշտամունքի ձեւերը — պատա-
րագի եւ ժշտութեան եւ զգեստաւորու-
մի ձեւերը, եւ այլնը նկատի առնել զա-
նոնք աւելի զեղարուեստականօրէն զե-
ղեցիկ ընծայելու համար:

4. Ժողովուրդին գործնական մաս-
նակցութիւնը երգակցելով եւ աղօթակ-
ցելով:

Այս գործնական բարեկարգութիւնը
կատարելու համար մասնաւորապէս կը
յայտնուի թէ պէտք է ժողովուրդը դաս-
տիարակել՝ սորվեցնելով եւ հասկնելով
անոր Եկեղեցւոյ վարդապետութիւննե-
րը եւ այլն, եւ «կրթել զայն Եկեղեցական
երգեցողութեան մէջ... երգական նո-
թայով ձայնադրել Եկեղեցւոյ շարական-
ներն եւ երգերը:

Նորութիւններ չեն Բաբէկէն Սրբա-
զանի յիշած բարեկարգելի կէտերը, ո-
րոնք տեղ տեղ գործադրութեան մէջ են
արդէն. այս կը նշանակէ միայն զանոնք
ընդհանրացնել եւ Եկեղեցիին կողմանէ
զանոնք պաշտօնապէս ճանչնալ: Բա-
րեկարգութեան կուսակիցները իրարմէ
կը տարբերին այս մասին իրենց ըմբռ-
նութիւններուն մէջ: Հարցը այս է թէ ոչ-
համամիտները ի՞նչպէս պիտի ընդունին
յիշեալ զաղաբարները, անոնք պիտի
կրնա՞ն իրենց ձայնը լսելի ընել տալ,
մանաւանդ Հայց. Եկեղեցւոյ այն պարզ

ԸՆՏԱՆԻՔԸ ՍԻՐՈՅ ԴՊՐՈՅ

«Սիրոյ միջ արմատացած եւ հաստատուած:»

Գ.

Վերջապէս, սէրը կ'արտայայտուի զոհողութեամբ (առանց այս բառին վրայ շատ խօսելու): Մեծ ճամբորդողը Լիվինկըսթըն սեւերուն, «իր սիրելի սեւերուն» ծառայելու համար ամէն ինչ թողելէ յետոյ՝ կ'ըսէր իրաւամբ. «Այլեւ չեմ գիտեր թէ ի՞նչ է զոհողութիւնը, զոհողութեան վրայ խօսիլ չեմ սիրեր, սիրտս այնքա՛ն լեցուն է սիրով անոնց համար:»

Լաւ հասկնայք զիս, անհրաժեշտ չէ՛ միշտ որ հոյակապ զոհողութիւններ ընէք, զոր օրինակ ձեր կեանքը տաք. բայց համոզմամբ կը հաստատուի թէ երբ ճշմարիտ սէրը կը տիրէ ընտանեկան վառարանին մէջ, ընտանիքի բոլոր անդամները պատրաստ կ'ըլլան սիրով զիջումներ ընելու: Մտրդ-կ'սկսի պզտիկ զոհողութիւններով, բայց քանի կը յառաջանայ՝ աւելի մեծերը կը կատարէ, մինչեւ որ կը հասնի ամենէն մեծ զոհողութիւններուն: Ամուսինները, զոր օրինակ, պէտք է յօժար ըլլան փոխադարձաբար կարգ մը բաներէ հրաժարելու: Երբ զաւակները վրայ կը հասնին, հայրը պէտք է զգայ թէ այլեւ կնոջ օրտին մէջ առանձին չէ ինք. պէտք է որ այդ պզտիկ էակն ալ որ աշխարհ կուգայ՝ իր տեղը ունենայ, պէտք է որ ան մեծնայ եւ ամուսինը պզտիկնայ, գոնէ որոշ տարիներու ընթացքին երբ մայրը ամբողջովին կը նուիրուի իր զաւակին: Լաւ ամուսին մը կամովին եւ սիրով կ'ընդունի ասիկա, ամուսնական սիրով բայց նաեւ այն խորհրդաւոր հայրական սիրով որ մանկան ծննդեան հետ կ'սկսի եւ զինք հեռուները կը յառաջացնէ զոհողութեան ճամբուն մէջ:

Երբ զաւակներ կան, պէտք է զանոնք մեծցնել իրենց համար, ընկերութեան համար եւ մանաւանդ Աստուծոյ համար, շատ աւելի քան իր անձին համար. պէտք է իրենց թողուի որ իրենք ընտրեն զործերնին, եթէ նոյնիսկ մեր խորհածէն տարբեր բաներ ընտրեն: Իրենց ամուսնութեան պարագային՝ պէտք է հասկնալ թէ զաւակներն են որ կ'ամուսնանան եւ ոչ թէ ծնողք, հետեւաբար պէտք չէ անոնց պարտադրել մեր ընտրած փեսայուն կամ հարսընցուն, այլ իրենց թողուլ ընտրութիւնը: Յետոյ տեսնել անոնց մեկնումը իրարու ետեւէ, ընդունիլ թէ կը դատարկուի բոյնը, ճշմարտութեամբ զուգահեռ լեցուիլէ յետոյ, ռմանց ընդ միշտ բաժանումովը զույգէ, ռմանց գալթելովը հեռաւոր երկիրներ, ընդունիլ այս ամէնը սիրայօժար, քաջութեամբ, ըսենք բառը, ուրախութեամբ, անոնց սիրոյն համար, ահա՛ զոհողութեան զբոսը, ահա՛ սիրոյ զպրոցը, սէր որուն ամենաճիշդ արտայայտութիւնն է զոհողութիւնը:

Եւ յետոյ, եթէ իր սիրոյ խորհրդաւոր ծրագրերնէրով Երկնաւոր Հայրը մեզմէ կ'առնէ մեր սիրելիներէն մէկը, առանց ընդվզումի տեսնել անոր փոխադրուիլը դէպ ի անձանթ յաւիտենականութիւն, Բարի Հովիւին թեւերուն վրայ, խոնարհիլ այդ գաղտնիքին առջեւ եւ ըսել Յօրնահապետին պէս. «Տէրը տուաւ ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը:» Չգառնան ալ, չ'ընդվզիլ, բայց կրկնել անդադար Երեսօրի հետ, ծնկալոյք. «Ձէ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, հապա ինչպէս որ դուն կ'ուզես:» Աս ալ սիրոյ զպրոցն է որ կը շարունակուի մինչեւ կտտարեալ յազթանակը այս սիրոյն, երբ վարագոյրին անդիլ կողմը պիտի տեսնուին ու վերջնականապէս միանան անոնք որ զիրար սիրած են:

Այս բոլորը կարելի է միմիայն շնոր-

հիւ Մեծ Բարեկամին որ մեզի կ'օգնէ։ Մէկը նամակով մը կը խնդրէր ինձմէ, վերջերս՝ խօսել օր մը թանկագին բարեկամներու մասին որ ընտանիքներէն շատերը կը հիւրընկալեն իրենց ծոցին մէջ։ Ես կը հաւատամ արդարեւ այս բարեկամներու դերին, գիտեմ թէ ո՛րքան անսահման բարեք կրնան ընել անոնք ընտանիքի մը, պայմանաւ որ իրենք ալ մասնակցին սիրոյ զպրօցին՝ շարժումով մը, նայուածքով մը, խօսքով մը, փափկանկատութեամբ մը, անոնք շատ բան կրնան ընել արգիլելու համար անհամաձայնութիւնները եւ հաստատելու ներգաշնակութիւնը։

Բայց թող թոյլատրուի ինձի բարձրաձայն ըսել թէ, որեւէ բարեկամ, սրբան ալ թանկագին ըլլայ՝ չի կրնար Մեծ Բարեկամին, Տէր Յիսուսի տեղը բռնել, Անոր որ իր երկրային կարճ պանդխտութեան մէջ այնքա՛ն կը սիրէր ընտանեկան կեանքը, Անոր՝ որ 30 տարի մարմնեղէն ընտանիքին ծոցը մնաց, օգնեց իր ծնողաց մեծցնելու բազմաթիւ եղբայրներ ու քոյրեր, ինչ որ այնքան զիւրին ըլլալու չէր, քանի որ այն ատեն իր եղբայրները հակառակ էին իրեն։ Յետոյ երբ անոնք մեծցան ու Յիսուս հոգեւոր ընտանիքներ ճախեց իրեն ուր իր սիրալառ սիրտը կրցաւ ընդարձակուել եւ մարդուիլ կենաց պայքարին համար։ Ասոնք եղան նախ իր առաքեալները, որոնցմէ երեք մտերիմները, Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս, շարունակ իր հետն էին եւ միշտ ալ զիւրին ըլլալու չէր անոնց հանդուրժելը։ Նաեւ սա Թանխայի ընտանիքը Ղազարոս եղբորմէն եւ իր երկու քոյրերէն բաղկացած, որոնց հաւատարիմ բարեկամը մնաց միշտ, լաւ օրերուն, ինչպէս նաեւ երկու քոյրերու մէջ աւժամեայ անհամաձայնութեան պարագային, ներդաշնակութիւնը վերահաստատելով հոն, սուգի պահուն մխիթարութիւն բերելով Մար-

թային ըսած իր յոյսի վսեմ խօսքերով ու Մարիամին հետ թափած արցունքներովը։ Վերջապէս երբ մխիթարութիւնը անոնց եղբորը յարութեամբը, հո՛ն է դարձեալ Մեծ Բարեկամը՝ Մարիամը պաշտպանելու համար Յուդայի անգութ քննադատութիւններուն դէմ։

Այսօր ալ Յիսուս իր Սուրբ Հոգիով կ'ուշէ հաւատարիմ բարեկամն ըլլալ, մեղմէ ամէն մէկուն ընտանիքին ամէն օրեայ բարեկամը, իթէ գիտնանք զինք հրաւիրել, քանզի բռնի չի գար Ան։ Եւ յետոյ՝ իթէ կրնանք զայն պահել, խուսափելով բոլոր այն բաներէն որ կը տխրեցնեն զինք ու կը հեռացնեն մեղմէ։ Ան մեր քովը պիտի ըլլայ շարունակ եւ ամէն օր, մտերիմ եւ հաւատարիմ. եւ իր ներկայութիւնը պիտի սրբաբացնէ մեր ամէն ողջ յարաբերութիւնները՝ իրաց վանկով զանոնք խանգարող բաները, ինչպէս անձնասիրութիւնը առաւել կամ նուազ ծագեալ։ Ան ալ պիտի կրնայ անգագար իր Հոգիին իւզը զնիւ ընտանեկան մեքենային վրայ որպէսզի երբեք չճռնչէ։ Ան պիտի կրնայ սրբացնել մեր ուրախութիւնները մեղ պահելով երջանկութեան այն վտանգէն որ դարձեալ անձնասիրութիւնն է, պիտի սրբացնէ մեր արցունքները անոնց ամբողջ գառնութիւնը վերցնելով, մեր գործերը պիտի սրբացնէ գանոնք դարձնելով միշտ աւելի օրգիական եւ միշտ աւելի հայրական։ Վերջապէս Հայրը մեզի ցուցնելէ ետքը՝ Ան մեզ պիտի մայնէ Հօրեկան տունը, ուր բոլորս նորէն պիտի միանանք ու ոչինչ պիտի կրնայ մեզ բաժնել։

Չա՞րժեր կարելին ընել ունենալու եւ պահելու համար ընտանիքին մէջ այսպիսի բարեկամ մը, յարատեւօրէն շարունակելով մեր ընտանեկան պաշտամունքները ուր բոլոր անդամները Մեծ Եղբոր հետ հաղորդակցութեան մտնելով Հօրը անունը կանչեն եւ ջանան օր ըստ

օրէ ապրիլ երկնային Հօրը նայուածքին ներքե ու Անոր սիրական Որդւոյն հաղորդակցութեան մէջ:

Յիսուս կաթողին բարեկամն է մեր:
Ո՛հ, ի՞նչ մեծ սէր:

Աւելի մօտ է, քան մեր եղբայրներ:
Ո՛հ, ի՞նչ մեծ սէր:

Հօս, տուն, բարեկամ, բոլորն ալ
կ'անցնին,
Յիսուս կը մնայ լոկ, իր շնորհքն անգին,
Ան մեզմէ բնաւ երես չի դարձներ:

Ո՛հ, ի՞նչ մեծ սէր:

(Վերջ)

Ժընևի

Վ. ՊէյեԱն

ՔՐԻՍՏՈՍԻ ՔՐԻՍՏՈՆԵՌԹՈՒԻՒՆԸ

«...ու միւսը՝ քի եւ Քրիստոսեան եմ:»

Ա. Կոր. 1. 12:

Գոհանանք Աստուծոյն որ Քրիստոսի եկեղեցիին մէջ գտնէ հատուած մը կը գտնուէր որ ինքզինքը Քրիստոսի անուանովը կը կոչէր. ուրիշներ կը նախընտրէին Պօղոսեան, Ապոլոսեան եւ Կեփաւեան կոչուիլ: Մոռցած իրենց Հովուապետը, Փրկիչն ու Տէրը՝ մտքերը երկրորդական առաջնորդներու վրայ կեդրոնացուցած էին. ամէն մարդ անոնց վրայ կը խորհէր, անոնց կը նայէր եւ անոնցմով կը պարծենար:

Ի՞նչ ծրարութիւն, մանաւանդ ի՞նչ ցաւալի երեւոյթ. որը սակայն միշտ ալ կը կրկնուէր Քրիստոսի եկեղեցիէն ներս: Այսօր եկեղեցիին նոյն ցաւալի դրութեան առկա կ'ապրի. անթիւ անհամար անուններ, յարանուանութիւններ, սուրբեր եւ կազմակերպութիւններ եթէ մէկ կողմէն շնորհքի պէսպիսութիւնները եւ լոյսի, տաղանգի աստիճանաւորումները մատնանշին՝ անոնք յաճախ ալ Քրիստոսի եւ հաւատացեալներու միջեւ գոյացած ամպիր են, որոնք Քրիստոսեաններու միտքը, հաւատքն ու

սէրը արժանաւոր կեդրոնէն վրիպեցնելու կը ծառայեն: Մարդիկ յաճախ աւելի կը հետաքրքրուին իրենց յարանուանութիւնով քան թէ Քրիստոսով: Փրկիչն ու փրկութիւնէն աւելի անոր վրայ կը խորհին. Յիսուսէն աւելի իրենց առաջնորդներուն վրայ կը հիանան, իրենց խէշալն ու կեանքի զեկավարող վարդապետութիւնները անոնցմէ քաղել կ'ուզեն: Մարդիկ աւելի կը սիրեն իրենց ուրոյն սուրբերը պաշտել քան թէ Յիսուս Քրիստոսը: Այո, մարդիկ յաճախ աւելի կը սիրեն Պօղոսեան եւ Ապոլոսեան եւ Կեփաւեան կոչուիլ քան թէ Քրիստոսեան:

Բայց պէտք էր որ ամէնն ալ Քրիստոսեան ըլլային, պէտք էր որ Քրիստոսն ըլլար իրենց միակ խէշալը, ինչպէս որ է իրենց միակ Փրկիչը: Պէտք էր որ ուղղակի Քրիստոսի հեռակէին, ամէնէն աւելի Քրիստոսի կեանքը եւ վարդապետութիւնը, Քրիստոսի Անձը եւ Անոր կոչն ու պահանջը ուսումնասիրէին. պէտք էր որ միայն զԱյն պաշտէին եւ Անոր նման իւր ջանադիր ըլլային: Քանզի Քրիստոնէութիւնը անկէ ոչ աւելի ոչ ալ պակաս բան մըն է:

Հատուածներէն եւ յարանուանութիւններէն ի գատ՝ խիստ ուշադրաւ է որ անհատներն ալ յաճախ Քրիստոսը մէկդի ձգած՝ իւրաքանչիւրը իրեն համար մէջ մէկ տեսակ Քրիստոնէութիւն ստեղծած է, որը շատ ալ կը տարբերի Քրիստոսի Քրիստոնէութիւնէն: Ծատ շատեր իրենց գաղափարները ի մի բերած, իրենց փափաքները կազմակերպած, իրենց փրկիչ սոփոյութիւնները Աստուծոյցած, իրենց անձին կամ փարթիին տեսակէաները, գաղափարները եւ ծրարքը ձեւաւորած՝ եւ անոր ճակտին «Քրիստոնէութիւն» պիտակը փակցուցած են: Բայց իրականին մէջ միայն մէկ տեսակ Քրիստոնէութիւն կայ, այն ալ Քրիստոսի Քրիստոնէութիւնն է:

Այսօր շատեր «Քրիստոնեայ» անունին տէր կ'ըլլեն. բայց, աւագ, անոնք յաճախ Քրիստոսի Քրիստոնէութիւնը չէ որ կը ներկայացնեն, և հետեապէս կ'իզմեն:

Ի՞նչ է Քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը Քրիստոսի նմանիլ է. Անոր աշակերտ ըլլալ է. շարունակ Անոր հետ հազորդութեան մէջ ապրիլ է. Անոր յանձնուիլ և Անոր համար ապրիլ է. Քրիստոնէութիւնը Յիսուս-Քրիստոսը իբր կ'եանքի օրինակ և իտէալ ունենալ և շարունակ Անոր ձգտիլ է: Բայց շատերուն Քրիստոնէութիւնը զրոյս գութն ունի միայն Յիսուսի. դառնանք մը որ Յիսուս կատարեալ մարդ էր, և թէ ազգի կ'ըլլայ եթէ բոլոր մարդիկ Անոր պէս ըլլան, առանց սակայն իրենք նմանելու Անոր, առանց իրապէս հետաքրքրուելու Անով, առանց ճանչնալու զԱյն, և առանց ոսկէ լուրջ ջանքի զԱյն ճանչնալու համար:

Ոմանց Քրիստոնէութիւնը բարոյականութենէն անդին չ'անցնիր, այդ ալ այն չափով և իմաստով միայն որ կը յարմարի իրենց ճաշակին կամ քմահաճոյքին, մկրտուած սակայն Յիսուսի աւետուրով. բայց առանց կենսական կապ մը ունենալու Յիսուսի հետը, առանց հաղորդակցելու Անոր հետը, առանց ներշնչուելու Անկէ, առանց պատասխանատուութեան զգացումի:

Ուրիշներու Քրիստոնէութիւնը հազիւ թէ Քրիստոսի Աւետարանին հոսկէ հոնկէ վերջուած փշուրներէ կը բաղկանայ—որոշ համարներ և մի քանի սիրական վարդապետութիւններ, այդ է աւելնը: Չեն փնտռեր լման Աւետարանը. տեղ չ'ունին ամբողջ և անբաժան Քրիստոսի մը: Այսպէս անոնք կը կարծեն թէ կրնան իրենց «Ես»ին գերին ըլլալ, անձնակեղծն կ'եանք մը ապրիլ և տակաւին Քրիստոնեայ ըլլալ, թէպէտև մեծագոյն երկրորդ պատուէրն է «Բու ըն-

կերդ քու անձիդ պէս սիրես»: Անոնք կը կարծեն թէ կրնան վրէժխնդրութիւնը գաղափարակոն և առաքինութիւն ընել և տակաւին Քրիստոնեայ ըլլալ. չնայած որ Յիսուսի պատուէրն է «Ձեր թշնամիները սիրեցէք»: Առաքեալը Տէրոջը միտքը անխարդախօրէն մեկնելով այսպէս կը գրէ. «Արդ մարմինին զործերը յայտնի են, որ ասոնք են . . . թշնամութիւններ, կռիւներ, նախանձներ, բարկութիւններ. . . գիւժողութիւններ. . . ու ինչ որ անոնց նման են. չոր հիմակուրնէ ևս ձեզի կը զրուցեմ, ինչպէս առաջուրնէ ալ կը զրուցէի, որ այսպիսի բաներ զործողները Աստուծոյ առջալսքիւնը պիտի չ'առանգեն»: Եւ ահա «Քրիստոնեայ» մարդիկ գիւժողութիւնը կը գովեն իբր անմեղ հաճոյք մը, ու շատ զիւրաւ արդարացումներ կը գտնեն իւրենց թշնամութիւններուն, կռիւներուն, նախանձներուն և բարկութիւններուն համար, որոնք նոյն իսկ սրբազան պատականութիւններ կը գտնան և տակաւին անոնք Քրիստոնեաներ են!

Այդ չէ Քրիստոնէութիւնը, բարեկամներս. Քրիստոսը մէկդի ձգած, Քրիստոսը մոռցած՝ մենք մեզի ու մենք մեզմէ նորանոր Քրիստոնէութիւններ կը հնարենք: Պէտք է Քրիստոսի գառնալ և սորվիլ Անկէ ճշմարիտ Քրիստոնէութիւնը. պէտք է ըմբռնել միանգամ ընդ միշտ որ Քրիստոնէութեան Հրամանատարը, Իտէալը և Վարդապետը միայն Քրիստոսն է: Պէտք է Աւետարանները ուսումնասիրել, ճշմարիտ յարգանքով, անկողմնակալ և համբերատար ոգով ուսումնասիրել և սորվիլ Քրիստոսի Քրիստոնէութիւնը:

Քիսապ

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՄԱՀԷՆ ՎԵՐՁ ԿԵԱՆՔ ՄԸ ԿԱՅ

Ամէնէն հետաքրքրաշարժ հարցումը որ եղած է հին փիլիսոփաներու կողմէ, կը բաղկանայ սա ութը պարզ բառերէ. «Եթէ մարդ մը մեռնի արդեօք նորէն պիտի ապրի՞» Կուզենք յիշել մի քանի կէտեր որ մեզ կը պատրաստեն հաւատալու թէ անդրշիրիմեան կեանք մը գոյութիւն ունի:

1. Բնութեան մէջ «Յառաջդիմական Զարգացումի Օրհնիշը: Բնութեան մէջ ամէն բան զէպի վեր կը ձգտի. վեր զէպի վերջնականը, վեր զէպի անտեսանալին, վեր զէպի հոգեւորը: Բնութիւնը բաժնուած է տարբեր մասերու, բաժանումներու և ամէն մէկ բաժանում թագաւորութիւն մըն է: Բաժանում մը որչափ որ ցած է, այնչափ ալ կոշտ եւ նիւթական ըլլալ կը թուի, իսկ որչափ որ բարձր՝ այնքան ալ նուրբ և հոգեւոր: Հետեւէ բնութեան բարեւորման զէպի վեր, զէպի անտեսանելին և զուն կը գտնուի նիւթը տարբեր ձեւերու մէջ. հաստատուն, հեղուկ, մթնոլորտային: Մթնոլորտի մէջ զուն կը գտնուի լոյս, ջերմութիւն, և զօրութիւն: Զօրութիւն կամ ոյժ անտեսանելի է, բնութիւնը մեզ միշտ կ'առաջնորդէ զէպի անտեսանելին: Հետեւէ բնութեան եւ պիտի գտնուի այդ անտեսանելին: Նախ սառ ապա ջուր և շոգի, ոյժ, զօրութիւն — Անճեղանելի: Նորէն փորձէ: Հետեւէ քնական աշխարհի մեծ բաժանումներուն. (1) Նիւթական (2) Բոսական, (3) Կենդանական. (4) Մտաւորական աշխարհ: Մտաւորական աշխարհը, մշտածութեան աշխարհն է: Մտածութիւն կամ խորհուրդ անտեսանելի է, և ալ աւելի հոգեւոր եւ սատուածային: Միտքը կամ խորհուրդը զօրութեան էութիւնն է: Այո՛, բնութեան մէջ ամէն բան զէպի անտեսանելին կը հակի, կ'երկարի:

2. Մարդկային Մտքի Օրհնիշը: Ի՞նչ է Մարդկային Միտքը, ոչինչ զայն կրնայ գոհացնել բացի յաւիտենականութիւններէ, աստուածայիններէ, անհունութիւններէ և անմահութիւններէ: Մարդուն հունաւոր միտքը որչափ անհուն է: Որչափ բարձր է այն եւ որչափ խոր. ինչ երկինքներ և ինչ դժոխքներ, ինչ անհուն վախեր և յոյսեր կը գտնուին անոր հունաւոր սահմաններուն մէջ: Անմահութիւն. այս գաղափարը ուսկի՞ց եկաւ: Անոր արմատը կը գտնուի մարդու հոգիին ամենախորը, և ան փորագրուած է մտքին ծալքերուն վրայ: Փառասէր հայր՝ մը որ մը իր զաւակը Սըր Բէյնօլտին կը բերէ խնդրելով այդ մեծ նկարիչէն թէ զայն ընդունի իբրեւ աշակերտ իր աշխատանոցին մէջ, և այսպէս կըսէ. «Տղաս քեզի կրնայ ներկել պատկերներու փոները:» Սրուեստագէտը կը պատասխանէ. «Այն անձը որ կրնայ փոնը նկարել, կրնայ պատկերն ալ նկարել:» Ետեւ ինչպէ՞ս որ կուզես, բայց մարդկային մտքին փոնն է, անոր ետին կը կենայ յաւիտենականութիւնը: Բայց ո՞ւսկից այս գաղափարը յաւիտենականութեան: Մարդկային միտքն է որ զայն գտաւ: Անմահութիւնն էն անոյ՜ ձայնն է զոր երբեք արտադրած ըլլայ մարդկային տենջերու ստեղծաշարը, և կամ թրթռացուցած ըլլայ մարդկային սիրոյ տաւիղը:

Ո՛հ, ժամանակին զօղանջող զանգերն, Որ կը հնչին միշտ, գիշեր ու ցերեկ, Մեզ յողնեցուցին, ո՛հ, անոնց ձայներն, Զի խաղաղութիւն չին բերեր երբեք: Մեր շունչը կտրած. սրտով մը զողողոյ, Մեր աչքերն յառած կը դիտենք անխոնջ, Տեսնելու թ'արդեօք մեզ կը մօտենա՞ն Փառաւոր եզերքն այդ անհունութեան:

Թրգ. Ա. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(Շար.)

ԱՍՍԻԶԵՑԻ Ս. ՖՐԱՆՉԻՍԿՈՍ

(Շար. և Վերջ)

Իրենց (Ֆրանչիսկոսեաններու) ուստը երեք կէտերէ կը բաղկանար. մաքրութիւն, հնազանդութիւն և չքաւորութիւն: Իրենց տարազը պարզ է. մեզի ծանօթ քուրձէ պարեգօտ մը և զըլխանոց, իբր զօտի չուան մը և իբր ոտնաման տրեխ: Իսկ իրենց ընկերակցութիւնը անուանեցին «Փոքր եղբայրները», Ֆրանչիսկոսեան անունը վերջէն տրուեցաւ անոնց:

Ընկերակցութեան առաջնորդը անոր անդամները միշտ կը յորդորէր Տէրոջմով ուրախ ըլլալ, և ինքը այս մասին լաւ օրինակ կը հանդիսանար անոնց: Տառապանք կրել, ամէն բանէ զրկուիլ անոնց համար կարծես հաճոյքի պատճառներ էին և իրենք զիրենք «Տէրոջ հաճոյստէրները» կը կոչէին:

Բայց այս ընկերութեան մասին խօսիլը զանց առնելով քիչ մ'աւելի ուսումնասիրենք անոր վեհաճն հիմնադրին կեանքն ու նկարագիրը: Ըստած է թէ բոլոր եկեղեցական պատմութեան մէջ երբեք գտնուած չէ մէկը որ այսչափ մեր Տէրոջ կեանքին մօտ և անոր տառաջիօրէն հետեւող մը գտնուած ըլլայ: Մենք կը կարծենք թէ այս գաղափարը կատարելապէս ճիշդ չէ, քանզի մեր Տէրը ճգնաւորի մը կեանքը չ'ապրեցաւ: Իր բոլոր կեանքը ուրախութեամբ լեցուն էր, ան կը սիրէր երգը, և հաճոյք կ'ըզգար բնութենէն: Դաւով հոգեւոր առարկաներու ան բոլորովին ինքզինքը կը կորսնցնէր և Փրկչին սէրին մէջ կը խորասուզուէր: Արեգակը կը կոչէր «Արե եղբայր», լուսինը՝ «լուսին քոյր», և թռչունները՝ «պղտիկ եղբայրները»: և Տէրոջը սէրին մասին անոնց կը քարոզէր: Արեի, լոյսի, հովի և ջրի վրայ «Առաւօտ Լուսոյ» շաւրականին նմանող ոտանաւոր մը գրեց, զոր միշտ կ'երգէր: Նոյնիսկ մահուան

«մահ քոյր» անունը կուտար, և յաճախ կը յիշէր թէ անկէ երբեք չի վախնար և անոր համար միշտ փառք կուտար Աստուծոյ: Ծննդաւոր միսգիրք մըն էր. Տէրոջը հետ խոր և անկեղծ յարաբերութեան մէջ կը գտնուէր և Աստուծոյ սէրը կը ցուայնէր իր կեանքին մէջ: Ան թէպէտ կը յարգէր Մարիամը, Յիսուսի մայրը, բայց անփութութիւն ըրած էր ուղղակի Փրկչին մօտենալ և անոր հետ տեսակցիլ: Ուրիշներու հանդէպ շատ քաղցր կը գտնուէր, բայց իր անձին հանդէպ շատ խիստ: Ինքը իր պընակը կ'առնէր և գետինը, հոգին վրայ նստած կը ճաշէր, մինչ ուրիշներ սեղանին շուրջը նստած կ'ուտէին: Մենեւ լուստեն, իր փափաքին համաձայն, մերկ ըլլալով հոգին վրայ պառկած աւանդեց իր հոգին:

Ֆրանչիսկոսի ազդեցութեամբ մեծ արթնութիւն մը յառաջ եկաւ Իտալիոյ մէջ. շատեր անդամազրուեցան այս միաբանութեան և աշխարհը լքեցին: Ս. Գլարա անուն կոյս մը այս վանականին խօսքերէն ներշնչուելով ապաշխարեցաւ, իր հօրը տունը լքեց և միաբանութեան ձեռնադրուեցաւ, և «Չքաւոր կրօնի» անունով միաբանութիւն մը հաստատեց:

Ֆրանչիսկոս միայն Իտալիոյ մէջ գործելով չզոհացաւ. ան՝ Սպանիա և Պաղեստին գնաց և Արաբներուն և Եգիպտոսի Սուլթանին Բրիստոսը քարոզեց: Ասոր օրինակին հետեւելով Ֆրանչիսկոսները աւետարանը քարոզելու համար շատ հեռու երկիրներ գացած, և մեծ անձնութիւնութեամբ աշխատած են:

Կը պատմուի թէ Ֆրանչիսկոս, իր մահէն երկու տարի առաջ, քարայրի մը մէջ ազօթած պահուն, յափշտակութեան ռոպայի մը մէջ շատ զարմանալի և միտդիք փորձառութիւն մը ունեցաւ: Հոն մարդկային լիցուով աննկարագրելի բաներ տեսաւ, և երբ արթնցաւ իր ձեռ-

քերուհի, ոտքերուհի և կուշտին վրայ մեր Տէրօջը վէրքերուհի նման վէրքի հեաքեր տեսնուեցան: Ինքը թէպէտ փորձեց ծածկել բայց իր բարեկամները հասկցան պայն: Ահնք չէինք ուզեր վճռել թէ այս աւանդութիւն մ'էր թէ միտքին՝ մարմնին վրայ օւնեցած մէկ ազդեցութեան արդիւնքը: Բայց անոր բոլոր կենսագիրները կը լիչեն այս գէպքը, որուն ճշմարտութեան կատարելապէս համոզուած են կաթողիկ պատմագիրները:

Բայց անոր կեանքին մէջ մեզի համար է՛ն կարեւոր կէտերը այս հրաշքի պատմութիւնները չեն: Այս մարդուն կեանքին մէջ մենք կը գտնենք այնպիսի հաւատացեալ մը՝ որ իր բոլոր հոգիովը կը սիրէ Յիսուսը և կատարելապէս նուիրուած և յանձնուած է Անոր կամքին: Մութ դարուն մէջ, իրր լուսաշող ջահ մը, միշտ կը քարոզէր Տէրը և Անոր սէրը, կը յայտարարէր թէ մեղաւորը որչափ ինկած մէկն է և թէ Յիսուսի համար ամէն բան ոչինչ է: Անոր գաղափարը, գաւառանքը և ընթացքը թերևս մերինէն կրնան տարբերիլ, բայց իցիւ թէ ամէն մէկ հաւատացեալ կարենար ունենալ անոր խորունկ կրօնական ապրումը, Տէրօջը հետ ունեցած տեսակցութիւնը, անձնագործ և ծառայող կեանքը: Ի. Մէրիլ

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

«Հոս չէ ան, հապա յարութիւն առաւ:» Ահա պատգամ մը, որու նմանը աշխարհ լսած չէ երբէք: Առաջին երեք Աւետարաններուն մէջ կը կարդանք թէ մէկ շարթի առառուն կանուխ խուսի մը կիներ խաչուած ու թաղուած Յիսուսին գերեզմանը եկանուէրներով: Հոն ինքզինքնին անակնկալի մը առջեւ գտան, այսինքն քարը գլորուած տեսան: Ներսմտան և Տէր Յիսուսի մարմինը հոն չը գտան: Տարակոյտով և վախով լիցուեցան: Բայց հոն կը գտնուէին երկու լու-

սափայլ հանդերձներով մարդիկ՝ որոնք քաջալերեցին այս կիները՝ ըսելով. «Ինչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ կը փնտռէք: Հոս չէ ան, հապա յարութիւն առաւ»:

Այս կիները և նոյն իսկ աշակերտները չէին կրցած հաւատք չնծայել կամ յիշել Յիսուսի խօսքը թէ Ան երրորդ օրը յարութիւն պիտի առնէր:

Յիսուս մեր Տէրը և Փրկիչը մեռելներէն յարութիւն առաւ: Անոր յարութիւնը իրողութիւն մըն է:

Ո՞վ կրնար թաղուած թողուլ և ոչնչացնել Քրիստոսը, Աստուծոյ Օծեալը որ ապրած և վարդապետած էր Լեւան Քարոյը: Ո՞ր ոյժը կրնար յարութեան արգելք հանդիսանալ Անոր որ սիրած էր ամէն մարդ անշահախնդիր սիրով: Դա՛նք ինչպէ՞ս կրնար յաղթել այն Հոգւոյն որը կենարար և Փրկիչ և Հաշտարար էր:

Գերեզմանը ինչպէ՞ս կրնար իր ծոցը պահել զԱյն՝ որ սպասաւորութիւն ըրած և իր կեանքը շատերուն համար փրկանք տուած էր:

Ասոր համար Պօղոս Առաքեալ, շատ իրաւամբ ըսած է, «Ո՞ւր է, ով մահ, և ու խաչթոյգ, ո՞ւր է, ով գերեզման, քու յաղթութիւնդ: Մահը և գերեզմանը պարտութեան մասնուեցան:

Ուրեմն սա եզրակացութեան կը յանգինք թէ ողջակէզուող սէրը, զթութիւնը, անկեղծութիւնն ու խոնարհութիւնը, ուրիշներու ապրելու համար եղած անձնազոհութիւնը, չեն յաղթուիր: Արդարութիւնն ալ յաղթական է: Ասոնք կրնան մեռնիլ ու թաղուիլ, սակայն յետոյ յարութիւն կ'առնեն, կը կենդանանան, կ'արդաստորին, կը բեղմնաւորին, կ'աճին ու կ'աւելնան, կը բազմանան, ինչպէս ցորենի ծաղիկը: «Եթէ ցորենին հատը հողին մէջ իյնալով չմեռնի, ինք մինակ կը մնայ, ապա եթէ մեռնի, շատ արգիւնք կուտայ:»

Սշակերտները խաչեալ և յարեալ

Քրիստոսը քարոյեցին: Նմանապէս մենք քրիստոնեաներս ալ պէտք է նախ հետեւինք յարութիւն առնող Քրիստոսի, պէտք է հնազանդինք Անոր և Անոր կամքը մեր կամքը ըրած և Անոր զոհաբերուող սիրով վառուած ու բռնկած պէտք է միշտ մեր կեանքովը Ձայն ցոլացնենք մարդոց և միանգամայն քարոյենք Ձայն իբրեւ խաչեալ ու յարեալ Քրիստոս:

ՅԻԿԷՆ

ԹՈՅՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄ

Գ.

Րօքֆէլըր Հաստատութեան պաշտօնեաներէն Տօքթ. Գարըլ ասկէ 17 տարիներ առաջ փորձով ապացուցած էր՝ թէ մարդկային մարմինն բջիջները (սեղ) մանրէներու նման մարմինէն զուրս հեղուկներու մէջ զրուելով կրնան բազմանալ, այսինքն անոնք կրնան սերմանալ և բուսնիլ: Տօքթ. Գարըլ 17 տարիներ առաջ չիշերու մէջ դրած մորթի, մսանի, լեարդի, և այլնի բջիջները մինչև այսօր կրցած է անուցտնել և ապրեցնել. եւ անոնց մասին հետեւեալ կերպով արտայայտուած է. «Այս բջիջները ճիշդ մարդկային մարմինն մէջ եղածին պէս սնունդ առած և բազմացած են, միևնոյն ատեն անոնց մարմիններէն բնական թոյն մը արտահոսած է: Եթէ այս բջիջներու մարմիններէն արտածուող թոյները լուալու համար իրենց մէջը գտնուած հեղուկը չես նորոգեր, անոնք իրենց թոյներուն մէջ կը մեռնին և կ'ոչնչանան: Էայց այս թոյները մերթ Եւրո մերթ լուալով և այդ հեղուկը փոխելով այդ բջիջները այսչափ՝ երկար ատեն տպրած են առանց ծիրութեան և հիւնալու նշաններ ցուցնելու, և այնպէս կը թուի որ անոնք այս կերպով շատ մը տարիներ տակաւին պիտի ապրին:»

Քիչեալ բժիշկը այս երևոյթէն հետնցնելով կ'ըսէ թէ մարդիկ ալ առանց ծիրանալու պիտի կրնան հիմակուանէն

քառապատիկ, հինգապատիկ աւելի երկար ապրիլ, եթէ մարդկային մարմինը իր թոյներէն երբեմն երբեմն մաքրելու համար այսպիսի միջոց մը գտնել կարելի ըլլայ:

Թոյներու դեղթափները:— Ամէն օր թունաւորուելու վտանգին մէջ պիտի գտնուէինք եթէ մեր մարմինը թէ՛ արտաքին և թէ՛ ներքին թոյներու զէմ գեղթափ արտադրելու կարողութեամբ օժտուած չէր ըլլար: Մեր լեարդն է մեր առաջին պաշտպանը բոլոր թոյներու զէմ: Մարդկային մարմինը այնպէս կազմուած է որ մեր առած բոլոր կերակուրները իբր սնունդ արեան խառնուէլէ առաջ անպատճառ մեր լեարդէն քամուելով կ'անցնին: Այնպէս որ առանց գիտնալու մեր կերած թունաւոր նիւթերը, նաեւ աղիքներու մէջ չմարսուած և կամ նիսած կերակուրներու միջոցաւ յառաջ եկող տեսակ տեսակ թոյները այս քամուելու գործողութեան միջոցին լեարդի գեղթափներու կողմանէ կ'ոչնչացուն: Շատ զարմանալի իրողութիւն մըն է թէ լեարդը եւ արիւնը՝ բնութեան մէջ եւ մեր մէջ գտնուող հազարաւոր տեսակ թոյներէն իւրաքանչիւրին զէմ գատ գատ գեղթափ պատրաստելու ոյժը ունին: Մարդկային ցեղը չէր կրնար գոյ ըլլալ եթէ Արարիչին այս նախախնամական կարգադրութիւնը չէր ըլլար:

Ահա թոյներու այս խնդիրը լաւ հասկըցուելէ վերջն էր որ, սա վերջին տարիներուն՝ ակաւներու արմատներուն և լինտերուն մէջ գոյացող ուռեցքները, կոկորդի և ականջի քրոնիկ բորբոքումները մեծ կարեւորութիւն ստացան: Ճշմարտութիւն մ'է թէ շատ մը մարդոց յօդերուն, գլխիներուն եւ մէջքերուն մէջ յառաջ եկող ցաւերուն, նաեւ շատ մը ստամոքսի, երիկամունքի եւ սրտի հիւանդութիւններուն պատճառը՝ ամէն օր քիչ քիչ մեր արիւնին մէջ թոյներու

խառնուելն է, որոնք թօնտիլի ծակերուն մէջ, կոկորդիլն մէկ անկիւնը կամ ակռաներուն տակը բոյն դրած մանրէներէն կ'արտադրուին:

Թոյներու մասին մեր խօսած պահուն կարծենք աւելորդ չըլլար մեր աղիքներուն մէջ ապրող չորս հինգ տեսակ որդերու մասին ալ քիչ մը խօսիլ: Այս մակարոյձները ընդհանրապէս մեր արիւնը ծծելով կ'ապրին. այնպէս կը խորհին թէ երկարոյնները (սոլան) մեր աղիքներուն մէջ գտնուող սնունդները ուտելով կ'ապրին: Բայց ստույգ կերպով յայտնի եղած է թէ անոնք ալ, երբ անօթեման, մեր աղիքներուն մէկ անկիւնը կը փակչին և մեր արիւնը ծծելով կ'ապրին: Անուրանալի իրողութիւն մ'է թէ բոլոր որդերը մեր արիւնը նուազեցնելով հանդերձ, ասոնք իրենց մարմիններէն զուրս ելլող թոյներու միջոցաւ մեզի շատ վնասներ կը պատճառեն: Հետեւաբար շատ կարեւոր խնդիր մ'է այս որդերէն ազատիլ, որոնք թէ՛ մեր արիւնը կը ծծեն և թէ՛ մեզ կը թունաւորեն:

Այս երկըին մէջ ամէն գարուն կը հանդիպինք պանիրի միջոցաւ թունաւորումներու. ծանօթ իրողութիւն մ'է թէ ասոր պատճառը թարմ պանիրին վրայ գէշ տեսակէն թունաւոր բուսական մանրէի մը բոյն շինելն է: Այս մանրէին թոյնը ո՛չ հոտ ունի և ո՛չ համ, և այս պատճառաւ գոյն ուտողը երբեք չի զգար թէ թոյն առած է: Այս թոյնը սաստիկ փոխումի, փորհարութեան եւ խիթերու պատճառ կ'ըլլայ, այնպիսի թոյն մըն է ան որ երակազարկը անգգաւի ընելու չափ սիրտը կը թմրեցնէ, եւ նոյնիսկ հազուադէպ տեսնուող յառաջ կը բերէ: Այս թոյնը թարմ պանիրին երեսը կը գտնուի եւ ջուրի մէջ չուտով կը լուծուի, որով վտանգէ գերծ ըլլալու համար լաւ է ուտուելիք թարմ պանիրը երկար տեսն ջուրի մէջ պահել եւ զայն լաւ մը լուսւիլէ վերջ ուտել: Եռացած և

աղի ջուրի մէջ դրուած պանիրէն այսպիսի թունաւորումներու չենք պատահած:

(Շար.) (Տօքթ.) Ա. ՃԵՊԷՃԵՍՆ

(Շար. էջ 292կն)

անգամները, որոնց բաժինն է միայն համակերպում ըստ «Սրոն»ի, բայց որոնք իրենց գրութիւններով երբեմն յախուռն և արմատական կարծիքներ կը յայտնեն, պիտի լռե՞ն թէ ֆունկուսիֆ քաղաքականութիւնը պիտի հետապնէ՞ զին և կամ հաստատ պիտի մնա՞ն իրենց տեսակէտներուն վրայ: Ահա ասոր պատասխանը պիտի որոշէ բարեկարգութեան, հետեւաբար Հայց. Եկեղեցւոյ տպագրան:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԱԻԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՋԻԿԱՅ ԺՈՂՈՎՐ

Քէսապի Հայ Աւետ. Եկեղեցին Միութիւնը հրաւիրեց իր յառաջիկայ տարեկան ժողովը գումարել Քէսապի մէջ, ամառուան սկիզբը: Միութեան ժողովին լրանալէն վերջ մտադրութիւն կայ, նոյն վայրին մէջ, հովիւներուն տասնօրեայ վազանց մը տալ, որուն միջոցին շահեկան նիւթերու շուրջ գոտախօսութիւններ պիտի արուին:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Քէսապի Աւետ. Եկեղեցիին հովիւը, վեր. Տիգրան Անդրէասեան, հնգամեայ պաշտօնավարութենէն վերջ իր հրաժարականը տուած է իր եկեղեցիին, որ զայն ընդունած է:

ԱՅՆԹԱՊՅԻ ԱԻԵՏ. ՆԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՅԹԸ

Մարտ 2ի գիշերը, Հալէպի Աղիգիյէ Հայ Աւետ. Եկեղեցիի վարի սրահը, Այնթապի Աւետ. հայերը հաճելի հաւաքոյթ մը ունեցան: Կատենապետէր Այնթապի Աւետ. ներու գործադիր Մարմինն նախագահը, ատամնաբոյժ Տր. Գ. Սարգիսեան: Գործադիր Մարմինն

կողմանէ տեղեկագրութիւն մը արուեստաւորաբար մէջէ հանկուցեցաւ թէ մօտաւորապէս 1600 Աւետարանական Այնթապցիներ կան քաղաքիս մէջ: Տիար Տիգրան Խրոբեան խօսեցաւ մեր հին բարի իտէալներուն հաւատարիմ մնալու վրայ եւ շեշտեց այս մասին վճռական որոշում մը տալու պէտքը: Ներկաներուն մէջ, որոնց թիւը 143 էրիկմարդերէ կը բաղկանար, շատ հաճելի էր տեսնել երկու ծերեր, մէկը 83 միւսը 88 տարեկան, որոնք իբր երիցազոյն եղբայրները իրենց հայրենակիցներուն կառքով եկած էին ներշնչելու ներկաները եւ վայելելու անոնց ներկայութիւնը: Ինը անդամէ բաղկացեալ էր Մարմին մը ընտրութեանէն վերջ ներկաները ցրուեցան անոյշ ապաւորութիւններու աղօղակութեան տակ: Այնթապցիները ունին Ռուբինեան հիմնադրամ մը, որուն տարեկան արկտը կը յաւակացուի գրողարանի մը կազմութեան երկու տարիէ ի վեր: Մարտ ամսուան մէջ հասած են 28 հատոր նոր հայերէն գեղեցիկ գիրքեր: Գրողարանը, որ կը գտնուի Աղիգիյէ Եկեղեցիի վարի սրահը, ամէն կիրակի առտուն կը բացուի, եւ որմէ կրնան օգտուիլ անխափր լոյրը Հայութիւնը:

ԸՆԿԵՐՍՅՈՒՆ ՀԱՒԱԳՈՅԹ

Հայ Աւետ. Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցչական մարմինները, Մարտ 6ին գիշերը, ընկերային հաւաքոյթ մը սարքեցին Մանչեսթր Բարձրագոյն Վարժարանի սրահը, ուր վայելեցին նաեւ համերգներ եւ նուագներ զպրոցին բաւոյթին միջոցաւ:

ԱԶԻԶԻՅԷ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

Եկեղեցական ժողովին գովելի նախաձեռնութեամբը եկեղեցիին վարի սրահը, Փետր. 24ին անդամներու յատուկ զուգարում մը տեղի ունեցաւ, ուր ներկայ էին մօտ 200 երկսեռ անդամներ, որոնք ասիթը ունեցան զիրար ճանչնա-

լու: Փափաքելի է որ եկեղեցիները սարքեն պարբերական կանոնաւոր անդամական ժողովներ՝ կենսական լուրջ խնդիրներով գրադիւլու համար:

Մարտ 9 ին նոյն ժողովին նախաձեռնութեամբը եկեղեցիին երիտասարդութիւնը հրաւիրուած էր հաւաքոյթի մը: Երիտասարդութեան հանդէպ համակրանքի եւ գնահատումի զգացումները, զորոնք այն հաւաքոյթով յայանելու գովելի գաղափարը ունեցած էր եկեղեցին, էական պայմաններն են երիտասարդութիւնը իր ծոցին մէջ պահելու համար:

ԳՈՒԼԻՔ ՀԻՒՐԵՐԸ

Ապրիլի կիսուն Հալէպի մէջ ըլլալ կ'ակնկալուին Մր. Ճ. Վօրիս, Համաշխարհային Կ. Դպրոցներու Ընկերութեան քարտուղարը Մր. Ք. Հօփքինս եւ նոյն ընկերութեան կողմանէ բնիկ Այնթապցի Տիար Յարութիւն Զէնեան:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Վեր. Է. Փարթիճ եւ Տիար Տ. Խըրլուեան Աւետարանչական այցելութիւն մ'ըրին Ալէք Մարտ 16-18 ին:

ՀՈՎԻՒՆԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Հալէպի Աւետ. հովիւները առնէ մ'ի վեր կ'ունենան պարբերական ժողովներ, որուն մէջ մասնաւոր նիւթերու վրայ ճառեր եւ ապա խորհրդակցութիւններ կը կատարուին:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԲԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նոյն իրիկունը գիշերային դպրոցը երիտասարդ սանիպին հանդիպեցաւ:

— «Ասի'ն է, Պապու, կուրտե՞ր ես:»
«Ոչ, պարոն»:

— «Հապա սա երեսիդ վրայի նշաններն ի՞նչ են»:

Պապու չը պատասխանեց, այդ վայրկեանին որքան կը փափաքէր ամէն բան ճիշդ եղածին պէս պատմել, եւ սակայն

...կապուած էր իր յեղային երզուածով։ Ուստի զլուսը կախեց, խիստ անհանգիստ կ'երևէր։ Սահիպը շուարեցաւ. յայտնի էր որ Պապու ծեծկուած էր, բայց դէմքին վրայի լրջութիւնը ինչպէ՞ս համաձայնեցնել զոյ աչքին ու ճգմուած քթին հետ։ Սահիպը համոզուած գոյացոյց թէ ասոր մէջ զաղանիք մը կար, հոր Պապու իրմէն կը պահէր։ Սկսաւ Պապուի անկիզժութեան մասին տարակուսիլ, և վերջապէս «կը ցաւիմ որ խորուեր եմ, Պապու» ըսաւ, «կը վախճամ թէ խոտուածք կոտորած ես, այս անթիւ քեզի լուր կուտամ թէ երբ յառաջիկայ ամիս ընդհանուր կառավարիչը մեր քաղաքը գայ, մեր մեծ հանդէսին զուն պէտք չէ որ ներկայ գտնուիս։ Քեզ այդ հանդէսին մէջ սքառութիւններու առաջնորդը ընել կը խորհէի, սակայն այս դէմքով կարելի չէ ելիլ կառավարիչին ներկայութեան, մանաւանդ քանի որ պատճառը ծածուկ կը մնայ տակաւին»։

Պապու ոչինչ պատասխանեց։

— «Քանի որ բացատրութիւն չես տար, գնա», ըսաւ սահիպը խիստ ձայնով մը։

Երեք օր վերջ Անանտիփուրի մէջ մեծ իրարանցում մը տեղի ունեցաւ։ Մեծ դատաւորին տունը գիշերային յարձակմամբ բացուած և իր վսեմաշուք հիւրերուն մեծաքանակ դրամն ու անգին գահարեղէնները վերցուած էին։ Դատաւորը չափազանց զգածուեցաւ աս բանը իր տանը մէջ պատահած ըլլալուն համար. և ինք ու ոստիկանական ամբողջ կազմը իրենց բոլոր կրցածն ըրին ոճրագործը գտնելու համար. սակայն հետք մ'իսկ անկարելի եղաւ գտնել։ Աւագ հիւրերը մեկնեցան վերջապէս խորհելով թէ Հնդկաստան ապականած երկիր մ'է և հնդկներուն ամէնն ալ զոյ են։ Բայց տանը հինգ օր վերջ երկու փոքր նշաններ գտնուեցան։ Ոստիկանապետը կըրցաւ գտնել այն խանութպանը՝ որ յայտ-

նեց թէ Մալիաին երկաթ թէլեր կտրող գործիք մը ծախեր էր. և զողօններ գնող վաճառական մը խոտուովանեցաւ թէ Մալիա քանի մ'օրէն գահարեղէններ պիտի բերէր իրեն՝ ծախելու համար։

Անմիջապէս Մալիա ձերբակալուեցաւ ու հարցաքննուեցաւ. սակայն միշտ իր անմեղութեան վրայ պնդեց. և իր սենեկակիցը երգմամբ հաստատեց թէ ծանօթ գողութեան պատահած գիշերը Մալիա իր սենեակն էր՝ և թէ ամբողջ այդ գիշերը երբէք սենեակէն զուրս ելած չէր։ Խնդիրը դարձեալ պիտի իյնար կատարեալ անստգութեան մէջ՝ և թէ սահիպը խիստ ճարպիկ հնարք մը չը խորհէր։ Ան ոճրագործ յեղեղէն ոմանց սովորութիւններն ու աւանդութիւնները ուսումնասիրած ըլլալով՝ գիտէր թէ Քանճարի մը պաղանիքը երեան հանելու ամէնէն ազդեցիկ միջոցը անոր ծառի-երզումն ընել տալն էր։ (Քանճարները կը հաւատան ոգիներուն՝ սրտնք գետերուն ու ծառերուն մէջ կը բնակին, խիստ շատ կը վախճան պանետն կոչուած ծառին ոգիէն։)

Ուստի, հետեւեալ օրը որ վաղանձի օրերէն մին էր, ամբողջ երկու հազար ոճրագործները հաւաքուեցան այս նշանաւոր տեսարանին հանդիսատես ըլլալու համար։ Մալիա, սահիպը, և մի քանի ոստիկանական պաշտօնեաներ կեցած էին գեղեցիկ, մեծ, ոստախիտ պանեան ծառի մը հովանւոյն տակ։

«Հոս եկուր, Մալիա», ըսաւ սահիպը կային մը տալով անոր ձեռքը, «երզումը բէ որ անմեղ ես, և եթէ ճշմարտապէս անմեղ ես, այս կայինով զարկ պանեան ծառին, իսկ եթէ անմեղ չես, թող ծառին ոգին անիծէ զքեզ և քու սերունդըդ»։

«Ծատ աղէկ, սահիպ», պատասխանեց Մալիա համարձակ, յետոյ վերադառնալ հանելով, կայինը ձեռքն առաւ։ «Ո՛վ ծառի ոգի», զոչեց, «եթէ ես ան-

մեզ չեմ, անիծէ զիս ու իմ սերունդս...» ու կայինը վերցուց ու զլսուն վերեւ դարձնելով կամաց մը գետինը դրաւ: Մեծ չչուկ մ'իյնկաւ հանդիսականներուն մէջ. «Ձի համարձակեցաւ զարնել, չի համարձակեցաւ», կ'ըսէին իրարու: «Ա՛տ ինչ է, Մալիա», ըսաւ աւիսյը, որուն աչքերը արտասովոր փայլ մ'ստացեր էր, «ատ ի՞նչ քրիւր, ծառին ինչո՞ւ չըզարկիր, անգամ մ'ալ փորձէ տեսնենք»:

«Այո», պատասխանեց Մալիա մեքենաբար, կացինն առաւ, երզումը կրկնեց, և սակայն նորէն չը կրցաւ ծառին զարնել. կացինը նորէն վար իջաւ գետինը: Այս անգամ ժողովուրդը բարձրաձայն խնդաց:

«Նորէն փորձէ», ըսաւ աւիսյը քաջաբերով չեչտով մը: Անգամ մ'ալ Մալիա ջանաց զիմադրել ոգիին անէծքին, բայց չկրցաւ, ու կայինը երրորդ անգամ ևս վար իջաւ առանց ծառին ունէ հարուած տալու: Այն ատեն Մալիա նշան քրաւ աւիսյին ու մօտեցաւ, քանի մը բառեր փոփոսաց ու լռեց: Մանկը զլուծը վեր վերցուց, անոր երեսը նայեցաւ, խնդաց ու ոտքի ելաւ, և ժողովուրդին դառնալով ըսաւ. «Ամէն բան պարզուեցաւ, բարեկամներ, Մալիա իր բրածը խոտովանեցաւ. ինքը, ևս ումեր ոտտիկաններէն մի քանին միտին պիտի երթանք և զոհարեղէնները պիտի բերենք. Մալիա մեզի պիտի ցոյց տայ ան ծառը՝ որուն տակը ինք թաղած է զանոնք»: Ժողովուրդը ապշած կ'աղաղակէր:

(Շարունակելի)

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Որտե՞նտ էր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան Տնօրէն-խմբագիրը՝ Տ. Ճ. Խրլորեան Տարեկան բաժնեգիրն — Սուրիա, 1.50
Սուր. ոսկի. արտասահման՝ 1.50 տոլար:
Հասցէ —

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE

ՓՐՈՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆԻ ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Փրոֆ. Լ. Լեւոնեան, Աթէնքի «Տը Սքուլ աֆ Բլիքըն»-ի ուսուցչապետը հերոսամասը հրատարակեց անգլիէրէն զիրք մը The Mozlem Mentality (Իսլամ Մտայնութիւնը) անուն, որուն մասին գեղեցիկ զրախօսական մը գրած էր Լօնտօն Թայմզ թերթը: Փափաքողները կրնան հետեւեալ հասցէներուն գիմել — George Allen and Unwin

Museum Street, London
5 Shillings

Pilgrim Press

14 Beacon Street

Boston, Mass. \$2.0

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ ԿԸ ՆՈՒՐԵՆ

Հալէպէն՝ Տօքթ. Գրիգոր Սարգիսեան՝ Վեր. Բ. Լեւոնեանի, Ֆիլատէլֆիա, Տիար Միհրան Պալիկեան՝ Տիար Լեւոն Պալիկեանի, Մօնթէվիտիօ: Պէլլանէն՝ Եազուպ Պալլիկեան՝ Օր. Մարիամ Յաւթիւնի, Տէր-Զօր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դիսոքրիւն եւ Կրօնք ՏՐ. Ճ. Լ. ՄԷՐԻԼ
Դեպ ի Յայրապետ
«Սիոն» եւ Բարեկապողները

ՅՕԴՈՒՄՆԵՐ

Ընթանիք՝ Սիոն Դպրոց
ԹՐԳ. ՏԻԿ. Վ. ՊԵԿԵԱՆ

Բրիստոլի Բրիստոնիքները
ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Ս. Ֆրանցիսկոս ՏԻԿ. Ի. ՄԷՐԻԼ
Մահիկ Վերջ Կեանք

ԹՐԳ. Ա. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
Յարութիւնը ՅԻԿԷՆ

Թոյնեւ եւ Թոնաւորութիւն
ՏՕԹԹ. Ա. ՃԻՊԵՃԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ